ՌԱՆԶԲԱՐ ԱԲԲԱՍ
Բաբոլի Ազատ համալսարան, Իրան

ՓՐԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՆՈՐ ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ ՍԱԼԵՀ ՀԱՅԵՐԻԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ

Ալաթոլլահ Մոհամմադ Սալեհ Հայերի Մազանդարանին Իրանի Ի. դարի ամենաականավոր կրոնական, գրական գործիչներից է: Նա իսլամական աշխարհում հայտնի է որպես մեծ հումանիստ, որն իր հոգեւոր եւ գրական գործունեությամբ ջանք չի խնայել աստվածճանաչողության ու մարդասիրության գաղափարների շուրջ միավորելու իսլամի երկու ուղղությունների՝ սուննիզմի եւ շիիզմի, ինչպես նաեւ համաշխարհային մյուս կրոնների հետեւորդներին:

Բանաստեղծի ստեղծագործությունը նվիրված է շիիզմի բարոյական սկզբունքների քարոզչությանը: Ուստի, Հայերիի բանաստեղծությունները թեեւ քերթողական արվեստով զիջում են գրչակիցների ստեղծագործություններին, սակայն հզոր են կրոնական եւ բարոյական գաղափարներն ընթերցողին հասցնելու տեսանկյունից, որոնք են՝ սերն առ Աստված, հայրենիքը եւ մարդը:

Նրա «دیوان الادب» ***«Դիվան ալադաբ»***[1] ***(«Գրական ժողովածու») եւ*** «بستان الادب» ***«Բուսթան ալադաբ»***[2] ***(«Գրական պարտեզ») բանաստեղծական ժողովածուներում առանձնակի կարեւորություն է տրվում «Ժամանակի իմամի»՝ Մահդիի***[3] ***երկիր վերադարձին եւ նրա կողմից աշխարհում արդարության, համերաշխության եւ մարդասիրության հաստատման գաղափարին:***

Փրկչին սպասելը շիա հավատացյալները համարում են առավելագույն նվիրվածության նշան: Ըստ նրանց՝ Աստծուն սպասումով երկրպագելու եւ փառաբանելու դեպքում մի քանի անգամ ավելին է շնորհվում, քան առանց սպասման փառաբանության ժամանակ:

---

[1] **M. S. Hayeri,** Divan aladab, Tehran, 1337.
[2] **M. S. Hayeri,** Bustan aladab, Tehran, 1349.
[3] Շիական տասներկուիմամական ուղղության տասներկուերորդ իմամ:

Հայերին փրկչին սպասելը համարում է հավատավոր մարդու կարեւորագույն հատկանիշը եւ հավատացյալներին կոչ անում սիրով կրել այս գաղափարը: Սպասման գաղափարի շուրջ հյուսված հադիսներից[4] մեկում ասվում է. «Իմ հետեւորդների ամենաարժեքավոր եւ ամենաիմաստուն գործը փրկչին սպասելն է»[5]:

Հայերիի կարծիքով՝ Մահդիի վերադարձի եւ նրա կողմից աշխարհի բարեփոխման թոհուբոհում ամենակարեւոր իրադարձությունը Հիսուսի վերադարձն է լինելու.

کی مسیح آرد ز چرخ چارمین رحل نماز کی به دوش نازنین دلق مرقع می کشد

Ե՞րբ է Հիսուսը երկնքից զորեղ աղոթք ասելու,

Ե՞րբ է իր նուրբ կրծքին դերվիշի քուրձ հագնելու («Դիվան ալադաբ», էջ 144):

Բանաստեղծը ցանկանում է քրիստոնյա աշխարհում Մահդիի կերպարն առավել ճանաչելի եւ ընդունելի դարձնել, քանի որ փրկության թեման համամարդկային գաղափար է, եւ փրկչի վերադարձի պատումներն առկա են թե՛ իսլամում, թե՛ քրիստոնեության մեջ[6]: Ըստ Հայերիի՝ երկու կրոնների հետեւորդներն էլ հավատում են, որ երբ աշխարհը թաղված լինի անաստվածության եւ անարդարության ճիրաններում, հայտնվելու է սպասված փրկիչն ու մի խումբ բարեպաշտների միջոցով բարեփոխելու է աշխարհը.

کی عیان از ماه من آن مطلع مستور گردد کی ید بیضای وی بر مصحف منشور گردد

کی زنو روی وی رخشنده هر دیجور گردد گنجها کی بوسه اش بر دست آن گنجور گردد

لطف شه کی عاقبت در هر دل رنجور گردد

Ե՞րբ են մեր աչքերն այն լուսնի ծագումը տեսնելու,

Ե՞րբ է Մովսեսի հրաշագործ ձեռքը Սուրբ Գրքի վրա հրամայող լինելու,

Ե՞րբ է նրա դեմքի լույսը տանջվածների համար փայլատակելու,

Ե՞րբ են նրա համբույրի գանձերը այն Գանձապահի ձեռքը հասնելու,

Վերջապես, ե՞րբ է այն Շահի բարեգութ ձեռքը տանջվածների սրտերին հասնելու («Բուսթան ալադաբ», էջ 96):

---

[4] Հադիս՝ պատմություն իսլամի մարգարեի եւ նրա մերձավորների կյանքից:

[5] **M. B. Majlesi,** Bahar alanvar, Beyrut, 1983, j. 5, s. 317.

[6] **M. Moin,** Loγatnameye Dehxoda, Tehran, 1998, Danešgahe Tehran, s. 2642.

Հայերին բոլոր կրոնների հետ երկխոսության ջատագով է եւ իր ստեղծագործություններում հաճախ է հիշատակում Հիսուսի անունը, ձգտում հիմնավորել իսլամի եւ քրիստոնեության համակեցության հնարավորությունը, պայքարում նրանց դեմ, ովքեր փորձում են խաթարել երկու կրոնների համերաշխությունը: Նրա բանաստեղծություններում համադրվում են Մահդիի եւ Հիսուսի փրկչական հատկանիշները, փայփայվում նրանց՝ միասին երկիր վերադարձի հույսը.

Հիսուսը երկնքից ե՞րբ կիջնի...
Մովսեսն իր գավազանով դեպի մեզ քայլի,
Իսկ Նոյն իր տապանից գա առանց վարանքի,
Աբրահամը՝ նախնիդ, Սուրբ Գրքով առջեւում լինի,
Մուհամմեդն ասի՝ Աստվա՛ծ, փառքդ շատ լինի,
Ադամն էլ Աստծո հարյուր անունով ներկա լինի («Բուսթան ալադաբ», էջ 75):

منطق داود و نطق موسی و عیسی

زاین کره و از چرخ چارمین تو بر آور

Դավթի միտքը, Մովսեսի ու Քրիստոսի խոսքերը
Քո՝ համբարձված բարձր երկնակամարիցդ ի կատար ածի՛ր... «(Դիվան ալադաբ», էջ 217):

شفایم تو ده ای مسیح زمانه

طبیبم تویی کن به دردم تطبب

Ապաքինի՛ր ինձ, ո՛վ ժամանակի Հիսուս,
Բժշկի՛ր դու ինձ ու ցավերս դարմանի՛ր... «(Բուսթան ալադաբ», էջ 328):

Հայերին Հիսուսի վարքի մեջ ընդհանրություն է տեսնում իմամ Հոսեյնի վարքագծի հետ: Արեւելքի մտածողներից միայն Հայերին չէ, որ նման ընդհանրություններ է տեսնում: Իմամ Հոսեյնի համեստության մասին քրիստոնյա արաբ գրող Անտուան Բարան[7] «Հոսեյնը քրիստոնեական գաղափարաբանության մեջ» գրքում ասում է. «Ես Աստվածաշունչը եւ Հոսեյնի կյանքի հետ կապված գրքերն ուսումնասիրելուց հետո եկել եմ այն եզրահանգման, որ Հիսուսի եւ իմամ Հոսեյնի վարքի ու աստվածհավատության միջեւ բազմաթիվ ընդհանրություններ կան: Նա ազատա-

[7] http://www.siasatrooz.ir/vdchx6nk.23nzidftt2.html آنتوان بارا نویسنده مسیحي کتاب «حسین در اندیشه مسیحیت
Antuan Bara. Hoseyn dar andišeye masihiyyat.

սիրության, արժանապատվության, թշնամիների դեմ պայքարում հպարտության պահպանման, միեւնույն ժամանակ մարդկային համեստության հատկանիշներ է դրսեւորում, ինչը մեծ մտահորիզոնի արդյունք է»[8]*:*

Հոսեյնի համբերատարությունն ու սիրալիր վարքը ուղենիշ են եղել նաեւ հնդիկ հայտնի գործիչ Մահարաթմա Գանդիի համար, որը խոստովանում է, թե ընդօրինակել է այդ հատկանիշները, որպեսզի իր գործերում հաղթանակով դուրս գա[9]*:*

Հայերիի ստեղծագործություններում ժամանակի իմամի՝ Մահդիի բաղձալի գալստյամբ հաստատվելու է Աստծո իշխանությունը: Նա արդարությամբ դատելու է բռնակալներին, կտրելու է խավարամտության եւ գերության կապանքները: Բանաստեղծը բոլոր շիաների նման հավատում է, որ աշխարհի վերջում Աստծո արդար ներկայացուցչի հայտնությամբ մարդիկ վայելելու են երկնային ու երկրային բարիքները: Թախծում եւ վշտանում է, որ շիաները երկար ժամանակ բաժանված են փրկչից: «Սիրելիից» բաժանված լինելն այնքան է բանաստեղծին տանջում, որ աշխարհային բարիքներն առ ոչինչ են նրա համար.

خواهش تنها نکنم بهر خویش شیعه همه ریش دلند و پریش

منتظر نرا بلب آمد نفس ای زتو فریاد بفرید رس

Խնդիրք չեմ անում լոկ ինձ համար,
Շիաները բոլորը սրտաբեկ են ու շվարած,
Քեզ սպասելով՝ հոգեհան եղան,
Քեզ են ձայնում, օգնությա՛ն հասիր («Դիվան ալադաբ», էջ 42):

Շիաները հավատում են, որ Աստված վերջին իմամի կյանքը մարգարեի նման երկար է սահմանել, ուստի այժմ ողջ է եւ թաքուցված կմնա այնքան ժամանակ, որքան Աստված կամենա:

Ժամանակի իմամի (Մահդի) հիշատակումը պարսից դասական պոեզիայում նախընտրելի թեմա է եղել դեռ միջնադարում: Այն հաճախ է հանդիպում հատկապես Հաֆեզի ղազալներում.

کجاست صوفی دجال فعل ملحدشکل بگو بسوز که مهدی دین پناه رسید

Ո՞ւր է հերետիկոսաբար գործող այն սուֆի հակամահդին,

---

[8] “Ruznameye Keyhan», 2007, 24 janvie, š. 18723, s. 7.

[9] http://alef.ir/vdcjaie8ouqeyyz.fsfu.html?205078.

M. S. Hayeri, Divan aladab, Tehran, 1337. Soxanane bozorgan dine eslām va šaxsiyathaye bename jahan darbareye Karbala va qiame emam Hoseyn.

Ասա՛, աղաղակի՛ր, որ ուր որ է վրա է հասնում հավատի պաշտպան Մահդին[10]*:*

Հայերին, թեեւ քաղաքական բովանդակությամբ սակավաթիվ բանաստեղծություններ ունի գրած, սակայն «گلایه فارسی» *«Գելայեյե ֆարսի» («Պարսից ողբը») դասիդեում երազում է բռնակալների իշխանության ավարտի մասին եւ հույս հայտնում, որ Մահդիի օգնությամբ իմաստուն ու բարի մարդիկ կիշխեն երկրում՝ արմատախիլ անելով խավարամտությունն ու օտարների միջամտությունը երկրի քաղաքական կյանքից.*

ریشه نامرد کند ز آب و خاک مرد خردمند کند جستجوی

تا همه پاینده بدانش کنند دست و سر و چشم و دل و پشت و روی

Տմարդությունն արմատախիլ կանի երկրի երեսից,
Եւ կփնտրի մարդկանց իմաստուն,
Բոլորը կհակվեն դեպի գիտություն՝
Մտքով ու սրտով, դեմքով ու ձեռքով («Բուսթան ալադաբ», էջ 290):

Հայերին ջանում է հարթել իսլամի երկու ուղղությունների միջեւ առկա տարաձայնությունները՝ օգտագործելով ընդհանրության յուրաքանչյուր նշույլ: Նա փարատում է այն թյուր կարծիքը, թե Մահդիին սպասումը տարածված է միայն շիաների շրջանում: Իրականում սուննիների շրջանում եւս առկա է Մահդիի գալստյան, անձի սրբության, աշխարհը բարեփոխելու գաղափարը: Սակայն, ի տարբերություն շիաների, սուննիները կարծում են, թե փրկիչը դեռ չի ծնվել, նոր է աշխարհ գալու եւ, ինչպես մարգարեն է ավետել, իրագործելու է իր առաքելությունը:

Բանաստեղծն ամեն գնով ջանում է ապացուցել, որ իսլամի երկու ուղղությունների միջեւ տարբերություն չկա, իսկ տարաձայնություններն արհեստական են: Հայերին մտահոգ է ոչ միայն իսլամի երկու ուղղությունների միջեւ համերաշխության հաստատման խնդրով, այլ նաեւ կարծում է, որ քրիստոնեությունը եւ իսլամը բազմաթիվ ընդհանրություններ ունեն, իսկ դրանց հետեւորդները ուրախության ու վշտի պահերին կարող են սրտակից լինել միմյանց:

Հայերին «Ֆաթեմե» կարճ դասիդեում, որ սրբուհուն նվիրված մահերգ է, ասում է, թե Հիսուսը վշտաբեկ է Ֆաթեմեի մահվամբ, իսկ նրա գերեզմանը, Աստվածաշնչի շնորհիվ, «գոհարացնցուղ» է.

عیسی از چرخ چهارم با ملایک نورباران روی قبر فاطمه ز انجیل گوهربار بینم

[10] **M. Hafez,** Divane ašar be tashihe Alame Qazvini, Tehran, 2001, s. 197.

Հիսուսն է իջնում երկնքից հրեշտակների հետ,

Աստվածաշնչից Ֆաթեմեի գերեզմանը գոհարացնցուղ եմ տեսնում («Բուսթան ալադաբ», էջ 275):

Սալեհ Հայերին մեկն էր այն չիա հոգեւորականներից, որոնք անդուլ պայքար են մղել կրոնական մոլեռանդության եւ անհանդուրժողականություն դեմ: Նրա ստեղծագործություններում առանցքային թեմա է Աստծուն ապավինելով՝ «մարդու Մարդ մնալու» գաղափարը, մարդ, որը փրկության ճանապարհին չի գայթակղվում ուղեղը մթագնող վաղանցուկ մոլուցքներով եւ «էժան արժեքներով»:

Իսկական հավատացյալի մասին նրա պատկերացումներն արտահայտվում են անմնացորդ ինքնայրումի եւ հոգեւոր հարատեւ կատարելագործման հետեւյալ պատկերով.

چوب تن را اگر تو پروردی به سعی و هم عمل می شود چوبت سپر . پر شود از اخترا

استخوان مومن خالص نمی پوسد به خاک ور نه چوبی بیش نبود آنهم اندر آذرا

Եթե մարմնիդ փայտը մշակելիս դրել ես ջանք ու եռանդ,

Փայտը երկինք կդառնա, այն էլ աստղազարդ:

Իսկական հավատավորի ոսկորները չեն փտում հողում,

Քանզի փայտից ավելի չեն եղել, այն էլ կրակի մեջ վառ («Բուսթան ալադաբ», էջ 349):

РЕЗЮМЕ

Аяатоллах Мохаммад Салех Хайери Мазандарани является одним из выдающихся религиозных и литературных деятелей 20-го в. Ирана. Основная тема его стихотворений - любовь к Богу, родине и человеку. Он сторонник диалога между всеми религиями. В своей поэзии он сопоставляет спасительские черты Иисуса и имама Махди, надеясь на их возвращение в земной мир.

SUMMARY

Ayatollah Mohammad Saleh Hayeri is one of the most outstanding religious and literary figures in Iran of the 20th century. The main subject of his poems is the love towards the God, motherland and human being. Hayeri is a strong supporter of the idea of a dialogue between all religions. In his poetry he combines the salvation features of Jesus and Imam Mahdi, expressing the hope for their return to the earthly world.